ՀՏԴ 904(479.243) Պատմություն

Սերգեյ Հախվերդյան
Դոցենտ
Գայանե Շաբունց
Ասիստենտ
Գորիսի պետական համալսարան

ՃՇՏՎՈՒՄ Է ՄԱՐԳԱԶՈՐ ԳՅՈՒՂԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ԿԱՌՈՒՅՑԱԾ ՍՅՈՒՆԵՑԻ ՏԻԿՆՈՋ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

16-րդ դարի կեսերին հիմնված Քաշաթաղի մելիքությունը իր գոյությունը շարունակել է և՛ 17-րդ դարի վերջին, և՛ 18-րդ դարի սկզբին: Քաշաթաղի Մելիք-Հախնազարի կինը՝ Մահփարին, շարունակելով սյունեցի ազնվազարմ կանանց հինավուրց ավանդույթը, իր որդի Բահադուր բեկի հետ 1700 թվականին կառուցում է մելիքության կենտրոն՝ Խանածախից 45 կմ հեռու գտնվող Մրգաձորի գողտրիկ եկեղեցին, թողնում շինարարական արձանագրություն:
Բահադուր բեկի անունը հիշատակվում է մեկ այլ արձանագրության մեջ ևս:

Բանալի բառեր. Մրգաձոր, Խանածախ, Խոտ, Մահփարի, Մելիք-Հախնազար, Բահադուր բեկ:

Сергей Ахвердян
Доцент
Гаяне Шабунц
Ассистент
Горисский Государственный Университет

УТОЧНЯЕТСЯ МЕСТОПОЛОЖЕНИЕ СЕЛА МАРГАДЗОР И ИДЕНТИЧНОСТЬ СЮНИКСКОЙ ДАМЫ, КОТОРАЯ В ЭТОМ СЕЛЕ ПОСТРОИЛА ЦЕРКОВЬ

Основанное в середине 16 века, Кашатахское меликство продолжало свое полноценное существование до конца 17 века и в начале 18 века. Жена Кашатахского мелика Магпари, продолжая древнейшие традиции Сюникских знатных женщин, совместно со своим сыном Баадур беком в 1700 году построила в 45 км от Ханацаха, центра меликства, прекрасную Мргадзорскую церковь, где оставила строительную надпись.
Имя Баадур бека упоминается также еще в одной надписи.

Sergey Haxverdyan
Docent
Gayane Shabunts
Assistant, Goris State University

SPECIFY ING THE LOCATION OF MARGADZOR VILLAGE AND THE IDENTITY OF SYUNIK'S WOMAN WHO BUILT A CHURCH IN THAT VILLAGE

Built in the middle of the 16th century the principality of Kashatagh existed prior to the end of the 17th century and the beginning of the 18th century. In 1700 along with her son Bahadur begue (prince), Melik-Hakhnazar's wife Mahpari constructed the gorgeous church of Mrgadzor, which is 45 km far from the centre of the principality of Khanatsakh and left a carved writing.
Bahadur begue's name is also mentioned in another writing.

Key words. Mrgadzor, Khanatsakh, Khot, Mahpari Melik-Hakhnazar, Bahadur bey.

Ստեփանոս Օրբելյանի <<Պատմութիւն տանն Սիսական>> աշխատությանը կից հարկացուցակում Սյունիքի Հաբանդ գավառում հիշատակվում է Մարգաձոր միջին մեծությամբ բնակավայրը, որը ութ միավոր հարկ էր վճարում Տաթևի վանքին: Հարկացուցակում այն հիշատակվում է անմիջապես Խոտ գյուղից հետո[1]: Ներկայումս ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Խոտ և Շինուհայր գյուղերի միջև դեպի Որոտան գետ իջնող մի տարածք կա, որ հայտնի է Մրգաձոր (բարբառով՝ Մրքաձոր) անունով և մտնում է Խոտ գյուղի համայնքային հողատարածքի մեջ[2]: Մրգաձորը կապ չունի մրգի կամ այգիների հետ, տեղանքը զառիթափ ժայռոտ է, այգեվետ չէ: Կարելի է եզրակացնել, որ

[1] Տես՛ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոսպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 375: (այսուհետ՝ Օրբելյան)
[2] Տես՛ Մրքաձորը տեղանքի բարբառային անվանումն է և կապ չունի մորուք բառի հետ: Հանիրավի է ծագումով Խոտ գյուղացի ձեռներեցի կողմից իր տաքսի ծառայությունը <<Մրքաձոր>> կոչելը:

դա Ստ. Օրբելյանի՝ Խոտ գյուղի հարևանությամբ հիշատակած Մարգաձորն է: Մարգաձորը հին բնակատեղի է, տարեց Խոտ գյուղացի Արշ. Կարապետյանի պնդմամբ՝ Մրգաձորի տարածքում է եղել Խոտի հին բնակատեղիներից մեկը[1]:

Ներկայումս Մարգաձոր-Մրգաձոր-Մրքաձորը խոտեցիների համար սրբատեղի է, ուր այցելում են բոլորը, թե մանուկ հասակում, թե հետագայում: Այնտեղ եղած եկեղեցին կոչում են Մրգաձորի վանք կամ խաչ: Եկեղեցում մոմ են վառում, մատաղ են անում: Մրգաձորի խաչը ուխտի առիթով կամ մատաղի համար այցելում են նաև շինուհայրցիները[2]:

Մրգաձորի եկեղեցին հսկա, մի քանի տասնյակ մետր բարձրություն ունեցող ուղղաձիգ ժայռի ստորոտին խխունջի պես կպած սագաշեն, ոչ մեծածավալ շինություն է, որը պատերի քարերի գույնով այնպես է մերվել տեղանքին ու ժայռին, որ նշմարվում է միայն մոտիկից: Եկեղեցու երկարությունը 10 մ է, լայնությունը՝ 6 մ, մուտքի պատի հաստությունը՝ 90 սմ: Եկեղեցու առջևի տարածքը խիստ զառիթափ է, բայց տարեց շինուհայրցիների վկայությամբ հնում այնտեղ եղել է փոքրիկ տափարակ, ուր շքեղ արարողություններով նշել են Համբարձման տոնը:



Եկեղեցին <<Գորիսի հանրագիտարանի>> հեղինակների հավաստմամբ իբր կառուցել է Շահ-Աբասի հարեմից փախած մի կին[3]: Դա իրական լինել չի կարող, քանի որ Շահ-Աբասը մահացել է 1628 թվականին: Ավանդության հիշատակության մեջ իրական է միայն այն, որ եկեղեցին կառուցողների մեջ եղել է, այո, մի կին, բայց ոչ հարեմից փախած, այլ հայ իշխանուհի կամ ավելի ճշգրիտ մելիքուհի: Մենք դա իմանում ենք եկեղեցու դռան բարավորի հստակ ընթերցվող շինարարական հինգ տողանոց արձանագրությունից[4]: Ահա այն.



ԵՍ ՊԱՐՈՆ ՊՀԱԹՈՒՐ ՊԱԿՍ, ՈՐԴԻ/
ՊԱՐՈՆ ՄԵԼԻՔ ՀԱԽՆԱԶԱՐԻՆ , ՈՐ ԵՄՔ
ՅԵՐԿՐԷՆ ՔԱՇԻԹԱՂՈՒՑ, ԳԵՂՋԷՆ ԽԱՆԱՃԱ
ԽԱ ԵՍ ԵՒ ՄԱՅՐ ԻՄ ՄԱՀՓԱՐԻՆ ՇԻՆԵԼ ՏՈՎԻՆՔ
ՍԲ ԵԿԵՂԵՑԻՍ Ի ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳՈՅ: Ի ԹՎԻՆ :ՌՃԽԹ: /1700/[5]

[1] Տես՝ Ալիշանը Հաբանդ գավառի մեջ ևս նշում է Մարգաձոր գյուղը, բայց որին տալիս է մի երկրորդ անուն ևս՝ Մաշկաղոց (տես Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 255):
[2] Տես՝ Հետաքրքիր է, որ մատաղ անողները դանակը սրբավայրից ետ չեն տանում, այլ թողնում են խրված հողի մեջ:
[3] Տես՝ Զոհրաբյան Է., Միրզոյան Հ., Գորիսի հանրագիտարան, ՎՄՎ-պրինտ, Երևան, 2008, էջ 210:
[4] Արձանագրությունը 2013թ. մարտ ամսին հայտնաբերել, լուսանկարել և մեզ է տրամադրել գեղանկարիչ, ՀՀ նկարիչների միության անդամ Ժիրայր Մարտիրոսյանը:

[5] Արձանագրության թվականը ճշգրտել է պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Գր. Մ. Գրիգորյանը:

Այսպիսով՝ Մրգաձորի գողտրիկ եկեղեցին շինել են տվել Խանածախ գյուղում ապրող Քաշաթաղի Մելիք-Հախնազարի որդի Բահադուր բեկը (Պհաթուր Պակ) և նրա մայր, Մելիք-Հախնազարի կին Մահփարին՝ 1700 թվականին: Մրգաձորը Խանածախից հեռու է մոտ 45 կմ[1]: Հայրենաշեն Մահփարին, թերևս, ծագումով եղել է Մրգաձորից կամ Խոտից և լավատեղյակ լինելով հին սրբատեղիի պատմությանը՝, որոշել էր իր որդու հետ այնտեղ եկեղեցի կառուցել:

Մրգաձորի եկեղեցու պատի շարվածքի մեջ հայտնաբերվել է երկար ու նեղ սալ քարի վրա արված ավելի հին արձանագրություն, որը տակավին սպառիչ ընթերցված չէ: Այնտեղ ընթերցվում է աստվածաշեն, աստվածածին սրբավայրի անունը, որտեղ և 1700 թվականին կառուցվել է նոր եկեղեցին: Գուցե և եկեղեցին էլ Սբ. Աստվածածին անունն է կրել…..

Խանածախցի Բահադուր բեկի անունը հիշատակվում է ևս մեկ արձանագրության մեջ, որը հայտնաբերվել է 2011 թվականին: Խանածախ գյուղի Սբ. Հռիփսիմե եկեղեցու գավթի շինարարական արձանագրությունը երեք տողով արված է չորս քարերի վրա: Արձանագրության մեջ մի առանձին քարաբեկորի վրա հստակ թվագրված է ՌՃԾ (1701 թվական): Արձանագրության մեջ կարդում ենք.

առաջին տող՝ ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ ՊՐՆ ԱՂԱՃԱՆ ԲԷԿՍ,
երկրորդ տող՝ ՇԻՆԵՑԻ ԶԳԱԻԹՍ ԻՎՐ[Ա] ԳԵՐԵԶՄԱՆԻ,
երրորդ տող՝ ԵՂԲՕՐՆ ԻՄՈՅ ՊՐՆ ՊՀԱԹՈՒՐ ԲԷԿԻՆ:

Այսպիսով՝ արձանագրության մեջ Աղաջան բեկն ասում է, որ գավիթը 1701թ. շինել է իր եղբայր Պհաթուր (Բահադուր) բեկի գերեզմանի վրա:

Անտարակույս, և՝ Մրգաձորի եկեղեցու դռան բարավորի շինարարական արձանագրության մեջ հիշատակված Քաշաթաղի Մելիք-Հախնազարի որդի Բահադուրը, և՝ Խանածախ գյուղի եկեղեցու գավթի շինարարական արձանագրության մեջ հիշատակված Բահադուրը նույն անձնավորությունն է:

Մրգաձորի եկեղեցու կառուցումից (1700 թվ.) կարճ ժամանակ անց՝ նա մահանում է և նրա եղբայր Աղաջան բեկը գերեզմանի վրա կանգնեցնում է գավիթը ու թողնում շինարարական արձանագրություն: Սա մի կողմնակի վկայություն է, որ 16-րդ դարի կեսերին Քաշաթաղում ձևավորված նշանավոր Մելիք-Հայկազյան մելիքական տոհմը 18-րդ դարի սկզբին շարունակում էր կենսունակ գոյատևել, նույնիսկ մելիքության կենտրոն Խանածախից տասնյակ կիլոմետր հեռու գտնվող Մրգաձորում իրականացնել շինարարական գործունեություն:

Հայտնի է, որ 1699 թվականին Իսրայել Օրու կողմից Անգեղակոթում հրավիրված մելիքների գաղտնի ժողովին մանակցել է Քաշաթաղի մելիք Մարտիրոսի որդի Էմիր բեկը[2]: Վերոհիշյալ արձանագությունների մեջ (1700,1701թթ.) հիշատակված Բահադուր և Աղաջան բեկերը, հավանավաբար, եղել են Էմիր բեկի հայր Մարտիրոսի եղբայրները, Մելիք-Հախնազարի և նրա կին Մահփարիի զավակները:

Մահփարին, շարունակելով Սյունյաց իշխանական տան ազնվազարմ տիկնանց բարի, հայրենաշեն ավանդները, կառուցելով Մրգաձորի եկեղեցին, թողել է անմոռաց ու ուսանելի հիշատակ:

[1] Խոսքը Սյունիքի Խանածախ գյուղի մասին է:
[2] Լեո, Հայոց պատմություն, հ.3, Երևան, 1946, էջ 523-525: